

զիտցածներս, գռածներս ու խորհածներս գրի առնում եւ վերակենդանացնեմ իր յիշատակը:

Երանի թէ Կոլոտի ծննդեան, մանկութեան եւ երիտասարդութեան եւայլ պարագաներն ու հանգամանքներն ալ ծանօթ ըլլային մեզի. այն ատեն, անտարակոյս, իր կեանքի առաջին փթթումներուն մէջ պիտի գտնէինք ապագայ շմտ երիտասարդ Պատրիարքին արտայայտիչ ձեռքերը: Դժբախտաբար քան մը չենք զիտեր Կոլոտի կեանքի այն մասին վրայ, զոր անցուց Մշոյ Ս. Կարապետ վանքը փոխադրուելէն յառաջ, Բաղէշի եւ Ամրտողու համալսարանին մէջ¹:

տեղի ունեցաւ 1903ին ալ: Այսօր ալ, (1904 Փետր. 14) դարձեալ Տեսանընդառաջին, զարմանալի զուգահիւսութեամբ մը, քիչ յառաջ Կոլոտը յիշատակելէ ետքը Ս. Լուսաւորչի մէջ, վերջին անգամ զրիչը ձեռք տոկ կնքելու համար իր Յիշատակին նուիրուած այս էջերուն վերջին փորձերը: Փափաքելի է որ Կոլոտի տարեդարձը պաշտօնապէս հաստատուի Ս. Լուսաւորչի մէջ՝ ատոր հետ միացնելով Ս. Լուսաւորչի ուրիշ բարեբարքներուն յիշատակը:

¹ Պէտք է դիտել տամ որ Կոլոտի մասին գրեթէ ո՛ր եւ է գոհացուցիչ գործ մը չէ հասած մեզի իր ժամանակակիցներէն կամ թէ հասած է եւ անծանօթ կը մասն հնծի: Այս կարգէն է Էջմիածնի նուիրակ Պետրոս Քիւթիւրի մատնանքը Կոլոտի դէմ: Քիւթիւր՝ Կոլոտի դէմ՝ վայրահաշող «սեւագլուհներուն» (հմտ. մանաւանդ էջ 37-40, 54, 59) զխաւորը եղած է: Շղթայակիր՝ իր Օրագրութեան մէջ կը յիշէ թէ կնչպէս «վասն ոչինչ իրի» Քիւթիւրի եւ Կոլոտի մէջ տեղի ունեցած «աղմուկ»ը լսեց եւ հաշտեցուց զանոնք. (Սիօն ամսագիր, 1866, Թիւ 8, էջ 127): Այս դէպքը կ'երեւի թէ «վասն ոչինչ իրի» չէր (թէեւ մենք ալ այդպէս նկատելով կարեւորութիւն տուած չէինք Կոլոտի վրայ գրելու ատեն). որովհետեւ այս ուսումնասիրութիւնը աւարտելէ ետքը տեսանք ձեռագրի մը մէջ (Անտոնեան Հարց Մատենադարանում, Օրթաքէօյ) որ՝ Քիւթիւր կը տքնի Կոլոտը տապալել եւ անոր տեղը զբաւել: Կոլոտ պահ մը կը զգուշանայ, քայց Շղթայակիր իր ազդու միջնորդութեամբ կը ջլատէ հակառակորդներուն ոյժը եւ